ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՄԱՅԻՍԻ 2017թվականի N 131

ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով այն, որ քաղաքացու սեփականություն հանդիսացող 07-065-0029-0010 կադաստրային ծածկագրի տակ գտնվող՝ Կրիկոր Հազոփ Մեսրոբյանին պատկանող 0.103 հա բնակելի կառուցապատման հողամասի վրա Կրիկոր Հազոփ Մեսրոբյանի կողմից ինքնակամ կառուցված 80 % եվ ավելի բնակելի նշանակության բնակելի տունը 187.78 քմ ընդհանուր մակերեսով չի գտնվում Հայաստանի Հանրապետության « Հողային օրենսգրքի » 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված է քաղաքաշինական նորմերին ու կանոններին համապատասխան, չի հակասում փողոցի ճարտարապետական ընդհանուր նկարագրին ու կառուցապատման պլաններին, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանված շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ.

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի 8, 9, 10, 11, 12, 13 կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի, ինչպես նաև Քասախ համայնքի ավագանու 2001 թվականի հոկտեմբերի 9-ի N13 որոշմամբ և հիմք ընդունելով քաղաքացի Կրիկոր Հազոփ Մեսրոբյանի դիմումը՝ **որոշում եմ**

1. Օրինականացնել քաղաքացի Կրիկոր Հազոփ Մեսրոբյանի սեփականությունը հանդիսացող 07-065-0029-0010 կադաստրային ծածկագրով հողամասի վրա քաղաքացի Կրիկոր Հազոփ Մեսրոբյանի կողմից ինքնակամ կառուցված 80 % եվ ավելի բնակելի նշանակության բնակելի տունը 187.78 քմ ընդհանուր մակերեսով:
2. Առաջարկել քաղաքացի Կրիկոր Հազոփ Մեսրոբյանին օրինականացման համար 60 օրյա ժամկետում վճարել. բնակելի տան համար 187.78x10000x0.26=488228 դրամ:
3. 60 օրյա ժամկետում սույն վճարումը չկատարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Քաղաքացի Կրիկոր Հազոփ Մեսրոբյանին պատկանող 07-065-0029-0010 կադաստրային ծածկագրով հողամասը վերահասցեավորել և նախկին Ծիրանանց թաղ. 21-րդ փող. թիվ 9 հասցեի փոխարեն հողամասին և դրա վրա գտնվող բնակելի տանը տրամադրել Ե. Չարենցի փողոց թիվ 9 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

20 17թ. մայիսի 23
Գ.Քասախ